ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3301 ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա
հեռ. (374- 2 85) 5-20-36, ֆաքս.(374 -10) 28-18-96
Էլ.փոստ kapan.syuniq@mta.gov.am, info@kapan.am

3301 г.Капан, А.Манукян 5а
тел. (374- 2 85) 5-20-36, факс.(374 -10) 28-18-96

19 մայիսի 2017թ. N **Ե-1129**
Ձեր _____ **N** _____

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Հակոբյան

Կից ներկայացնում ենք Կապան համայնքի ավագանու 2017թ. մայիսի 18-ի 3-րդ արտահերթ նիստի թիվ 41-43 որոշումները /թվով 3 որոշում/:

Առդիր 18 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Կատ. Ընդհանուր և վարչաիրավական բաժին
028528002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇՈՏ ... ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
5094
«10» 05 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 41-Ա
18 ՄԱՅԻՍԻ 2017թ.
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի ԹԻՎ 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը նիստի օրակարգը հաստատելու մասին, որոշման նախագծի քվեարկության *8* կողմ, *0* դեմ, *0* ձեռնպահ արդյունքներով, համայնքի ավագանին *որոշում է.*

Հաստատել Կապան համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 3 արտահերթ նիստի օրակարգը.

1. Կապան քաղաքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2018 թվականի ծրագիրը հաստատելու մասին
2. «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» ծրագրին Կապան համայնքի անդամակցության առաջարկությանը համաձայնություն տալու մասին

Կողմ (8)՝

ԲԱԲԱՅԱՆ ՆԱՐԵԿ — ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ — ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

ԴԱՎԹՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ — ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀԵ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՐԱՄ — ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ մայիսի 18
ք. Կապան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 42-Ն
18 ՄԱՅԻՍԻ 2017թ.

ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42)-րդ կետով, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի «ՀՀ կառավարության որոշումը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առաջարկվող բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները եվ դրանց ֆինանսավորման համամասնությունները ու «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն հաստատված և առաջիկա տարվա պետական բյուջեով նախատեսված ծրագրում համայնքի ավագանու կողմից առաջարկվող փոփոխությունները Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարության ու Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության հետ համաձայնեցնելու կարգերը հաստատելու մասին» թիվ 1544-Ն որոշման և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության 8 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Կապան քաղաքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2018 թվականի ծրագիրը՝ ընդհանուր 23006.0 հազար դրամ արժողությամբ, այդ թվում՝ բնապահպանական միջոցառումների մասով – 18392.0 հազար դրամ և առողջապահական միջոցառումների մասով – 4614.0 հազար դրամ, համաձայն հավելվածի:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաստատված ծրագիրը ներկայացնել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն՝ 2018 թվականի պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:

Կողմ (8)՝

ԲԱԲԱՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

ԴԱՎԹՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀԵ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

Դեմ (0)

Չեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ մայիսի 18

ք. Կապան

Հավելված
Կապան համայնքի ավագանու
2017թ. մայիսի <<18>>-ի թիվ 42-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԵՎ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ

ԿԱՊԱՆ - 2017

ՆԱԽԱԲԱՆ

Կապան քաղաքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2018 թ. ծրագիրը կազմվել է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի /ՀՕ-188, 15.05.2001թ./ և «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առաջարկվող բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունը և դրանց ֆինանսավորման համամասնությունները ՀՀ Բնապահպանության նախարարության ու ՀՀ Առողջապահության նախարարության հետ համաձայնեցնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման /N 1544-Ն, 26.09.2002թ.և 27.02.2014թ.N 197- ն որոշման բնապահպանական ծրագրերի մշակման կարգը հաստատելու մասին/ պահանջներին համապատասխան:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կապանը Հայաստանի Հանրապետության լեռնահանքային արդյունաբերական կենտրոններից մեկն է: Պղնձի և բազմամետաղային հանքավայրի երկարամյա շահագործումը, շրջակա տարածքներում իրականացված և իրականացվող երկրաբանահետախուզական աշխատանքների հսկայական ծավալները, խոշոր պոչամբարների առկայությունը, հին հանքախորշերի փլուզման վտանգները, սողանքային ակտիվ գործունեությունները, լանջերի հողատարումը, ժամանակին կատարված տարածքի անտառների անկանոն հատումները, քաղաքի միջով անցնող և խոշոր բեռնատարների երթևեկությամբ ծանրաբեռնված միջազգային ավտոմայրուղին քաղաքի բնության և բնակչության առողջության համար էկոլոգիական մեծ ռիսկեր են պարունակում: Նախատեսվում է մոտ ապագայում «Հյուսիս-Հարավ» միջպետական մայրուղու նախագծով փոխել Կապան համայնքով անցնող մայրուղու կարգավիճակը, որով կթեթևացվի նշված ճանապարհի ծանրաբեռնվածությունը:

Չնայած մատնանշված բազմաթիվ վտանգների և էկոլոգիական ակնառու խնդիրների առկայությանը, մինչև այժմ իրավիճակի գնահատման և իրական պատկերը ստանալու նպատակով որևէ համալիր միջոցառում չի իրականացվել, ինչը դժվարացնում է խնդիրների բացահայտումն ու այդ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների արդյունավետության ապահովումը:

Քաղաքի կենտրոնով անցնող Ողջի գետի հունը աղտոտված է կենցաղային աղբով, տարիներ ի վեր կուտակված գետաբերուկներով և տիղմով, ինչը սանիտարահիգիենիկ անբարենպաստ իրավիճակ է ստեղծել:

2009թ.-ից պարբերաբար տեղական և պետական բյուջեով (բնապահպանական ծրագրով) իրականացվում է նշված գետի հունի մաքրման աշխատանքներ: 2017թ.-ին <<Կապանի լեռնահարստացման կոմբինատ>> ՓԲԸ ֆինանսավորմամբ իրականացվել են Ողջի գետի որոշակի հատվածի մաքրման աշխատանքներ:

Նախատեսվում է շարունակել այդ գործընթացը՝ նպատակ ունենալով ավարտել Ողջի գետի հունի մաքրման աշխատանքները:

Տրանսպորտային միջոցների թվաքանակի մեծացումը, միջպետական ծանրաբեռնված մայրուղու քաղաքի կենտրոնով անցնելու հանգամանքը՝ փողոցների կանաչապատման, ծառատնկման, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները ընդլայնելու անհրաժեշտություն է առաջացրել: Կապան քաղաքի կենտրոնական փողոցների՝ (Չարենցի, Ա.Մանուկյան, Մ. Ստեփանյան) մայթերին 1955-1960 թվականներից որպես դեկորատիվ տնկված ծառատեսակները ներկա դրությամբ արդեն ծերացել են, բները հաստացել: Իսկ որոշ ծառեր չորացել կամ գտնվում են կիսաչոր վիճակում: Ամեն տարի ուժեղ քամիների ժամանակ ջարդվում են և ընկնում գետնին, վտանգավորություն ստեղծելով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտնի համար: Ծառերի արմատները դեպի վերև աճելով խարխլել են մայթերի սալիկները և հողաշերտը բարձրացնելով անհարմար և դժվարանցանելի են դարձրել նշված փողոցների մայթերով անցնող բնակիչների համար: Այդ պատճառով բնակիչների կողմից բազմաթիվ անգամ բողոքներ են ներկայացվել համայնքին, միջոցներ ձեռնարկելու և վերացնելու այդ թերությունները:Հատկապես գիշերային ժամերին լուսավորության բացակայության ժամանակ վտանգավոր է դարձել մարդկանց համար քայլելը: Ներկա իրավիճակի պատճառը մայթերին ժամանակին ծառատնկման համար ոչ ճիշտ ծառատեսակի ընտրությունն էր: Ծառերը թե՛ արմատների աճման բնույթով, թե՛ իրենց սաղարթով և բների չափսերով չեն համապատասխանում փողոցների մայթերին տնկելու համար ճիշտ ծառատեսակների պահանջվող չափանիշներին: Այսօր մայթերին տնկված ոչ ճիշտ ծառատեսակները խնդիր են առաջացրել համայնքի համար: Ծառերը պետք է հանվեն, մայթերը բարեկարգվեն, իսկ հին ծառերի փոխարեն նախատեսվում է տնկել այնպիսի դեկորատիվ ծառատեսակի տնկիներ, որոնք իրենց հատկանիշներով և չափանիշներով համապատասխանում են մայթերին աճեցնելու համար: Նշված գործընթացները կիրականացվեն նաև մյուս փողոցներում. իսկ մայթերը միաժամանակ կբերվեն բարվոք վիճակի: Արդյունքում կգեղեցկանա և կբարեկարգվի քաղաքի կենտրոնական հատվածը:

Համայնքը միջոցներ է ձեռնարկում պետական բյուջեից բնապահպանական ծրագրերով հատկացված գումարներով և տեղական, միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ մինչև 2020թ. ավարտել աշխատանքները:

Ծրագրի կազմմանը խորհրդատվության կարգով մասնակցել է համայնքում գործող «Խուստուփ» բնապահպանական –հասարակական կազմակերպությունը:

Բնակչության բնապահպանական տեղեկատվությունը և իրազեկումը որոշակիորեն ապահովում է քաղաքում գործող <<Օրհուս>> բնապահպանական տեղեկատվական կենտրոնը, ինչը սակայն չի կարող լիարժեք լինել քաղաքի էկոհամակարգի վերաբերյալ հավաստի տվյալների բացակայության պատճառով:

Կապանի համայնքապետարանի ենթակայությամբ գործում է 12 նախադպրոցական ուսումնական հաստատություն և 9 արտադպրոցական ուսումնական հաստատություն՝ երեք երաժշտական և երեք մարզադպրոց, արվեստի,

գեղարվեստի, ՄՊՍԿ: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների թիվը՝ 1523 է, աշխատողների թիվը՝ 357: Արտադպրոցական հաստատություններում երեխաների թիվը՝ 1412 է, աշխատողների թիվը՝ 213: Համայնքապետարանի ենթակայությամբ գործում են նաև <<Կապանի մանկական կենտրոն>>, <<Կապանի մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-ները, որտեղ հաճախող երեխաների թիվը՝ 206 է, աշխատողների թիվը՝ 59:

Ուսումնական հաստատություններ հաճախող սաների, աշակերտների բժշկական սպասարկումն իրականցվում է հաստիքացուցակով նախատեսված բուժքույրերի միջոցով:

Համայնքն ամեն տարի տեղական բյուջեի հնարավորությունների սահմաններում որոշ աշխատանքներ է իրականացնում բարելավելու նշված ուսումնական հաստատություններում բժշկական սպասարկումը, սակայն այդ ուղղությամբ աշխատանքներ շատ կան:

Ակնկալում ենք «Շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման» բնապահպանական ծրագրի «Առողջապահություն» միջոցառման բաժնում նախատեսված ֆինանսական միջոցներով նշված ուսումնական հաստատությունների բուժկետերի համար ձեռք բերել բժշկական գործիքներ, գույք, սարքավորումներ և դեղորայք /ձեռքբերվող դեղորայքի ցանկը կհամաձայնեցվի «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի համապատասխան բաժնի մասնագետների հետ/: Արդյունքում կբարձրացվի երեխաների և աշակերտների, ինչպես նաև աշխատողների անհարժեշտության դեպքում առաջին բուժօգնության և բուժսպասարկման գործունեության մակարդակը:

Ծրագրի առաջնայնությունները սահմանել ենք նկատի ունենալով քաղաքում վերը նշված վտանգների և ակնառու խնդիրների առկայությունը, ինչպես նաև՝

հաշվի առնելով քաղաքի և շրջակա տարածքների վրա լեռնահանքային արդյունաբերության բացասական ազդեցությունը,

համոզված լինելով, որ հնարավոր չէ համայնքի կայուն զարգացումը առանց բնապահպանական բաղադրիչի,

գիտակցելով մարդու լիարժեք կենսագործունեության համար էկոլոգիական անվտանգության ապահովման կարևորությունը,

2010 թվականին Կապան քաղաքում <<Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին>> ծրագրով իրականացվել է «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տարածքում սեպտիկ թափոնների, թաղման փոսի և սրածայրի կառուցում, որի համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը սուբվենցիայի կարգով համայնքին հատկացրել է 3.002.100 դրամ: Արդյունքում բժշկական վտանգավոր թափոնները վնասազերծվում են սանիտարական կանոններին և նորմերին համապատասխան, ինչն էականորեն նվազեցրել է շրջակա միջավայրի աղտոտումը տոքսիկ էլեմենտներով: 2011 և 2012թթ. բնապահպանական ծրագրով իրականացվել են Ողջի գետի հունի մաքրման աշխատանքները: 2013թ իրականացվել են Դավիթ Բեկի արձանին հարակից կամրջից մինչև «Շարմ» հանրախանութն ընկած հատվածի բարեկարգման, ծառերի տնկման և

նոր տեսակի տնկիների տնկման աշխատանքներ, իսկ 2014 թվականին իրականացվել են Ա. Մանուկյան փողոցի մայթի «Շարմ» հանրախանութի հարակից հատվածից մինչև «Կապանի գյուղմթերքների շուկա» ՍՊԸ-ին միացնող կամրջի գետափնյա հատվածի ծառերի էտման, հատման, ծառատնկման և տարածքի կանաչապատման ու վերանորոգման աշխատանքներ: 2015 թվականին համայնքին բնապահպանական ծրագրով պետական բյուջեից հատկացված 15406.3 հազ.դրամ գումարով իրականացվել են Ա. Մանուկյան փողոցի դեպի շուկա տանող հետիոտն վերգետնյա կամրջից սկսած 147.0 գ.մ հատվածի բարեկարգման, ծառերի հանման և նոր տեսակի տնկիների տնկման աշխատանքներ: 2016 թվականին համայնքին բնապահպանական ծրագրով պետական բյուջեից հատկացված 6338.6 հազ. դրամով իրականացվել է Ա. Մանուկյան փողոցի քաղաքապետարանի հարակից մայթի (քաղաքապետարանի մասնաշենքից մինչև Ա. Մանուկյան հուշարձանը մոտ 80.0գծ.մ նշված հատվածը) վերանորոգման, ծառերի տնկման աշխատանքներ: Ծրագրի ընդհանուր արժեքը համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում էր 150.0 մլն. դրամ:
2017 թվականին բնապահպանական ծրագրով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքին հատկացված 8875.0 հազ. դրամով իրականացվում է «Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց»» ՊՈԱԿ-ից մինչև Ա. Մանուկյան փողոցի թիվ 3 բազմաբնակարան բնակելի շենքի դիմաց ընկած գետափնյա մայթի մոտ 90.0 գծ.մ հատվածի վերանորոգման, ծառերի տնկման աշխատանքներ (աշխատանքներն ընթացքի մեջ են):
2018 թվականին բնապահպանական ծրագրով ՀՀ պետական բյուջեից համայնքին հատկացված 12722,0 հազ. դրամով նախատեսվում է իրականացնել Ա. Մանուկյան փողոցի թիվ 3 բազմաբնակարան բնակելի շենքի դիմաց ընկած գետափնյա մայթի հատվածից մինչև Ա. Մանուկյան փողոցի թիվ 5 բազմաբնակարան բնակելի շենքի դիմացի մայթի մոտ 130.0 գծ.մ հատվածի վերանորոգման, ծառերի տնկման աշխատանքներ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նպատակ 1 Շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելում

Խնդիր 1 Մակերևութային ջրերի աղտոտման սահմանափակում

Գործողություն 1 Ողջի գետի հունի մաքրում

Արդյունք ա/ կենցաղային թափոններից ու գետաբերուկներից կմաքրվի քաղաքի կենտրոնով հոսող Ողջի գետի քաղաքի միջով անցնող հատվածի ջրային ավազը:

բ/ կբարելավվի Ողջի գետի ջրային էկոհամակարգը:

գ/ բարենպաստ պայմաններ կստեղծվեն գետի ջրային ֆաունայի, հատկապես ձկների պահպանության համար:

Խնդիր 2 Մթնոլորտային օդի բարելավում

Գործողություն 1 Կապան քաղաքի Ա. Մանուկյան փողոցի կենտրոնական հատվածի մայթերին ծառատնկում, կանաչ տարածքների վերականգնում և բարեկարգում:

Արդյունք ա/մթնոլորտային օդում փոշու և տրանսպորտային արտանետումների խտությունների նվազում /հատկապես երթևեկությամբ ծանրաբեռնված կենտրոնական փողոցների և քաղաքի կենտրոնական մասով անցնող Հայաստան-Իրան ավտոմայրուղու երկայնքով/:

բ/ կնպաստի քաղաքում բարենպաստ միկրոկլիմայի ձևավորմանը:

Գործողություն 2. Քաղաքի կենտրոնական հատվածի մայթերի բարեկարգում.

Արդյունք ա/ Բարեկարգված մայթերով հետիոտնի անվտանգ տեղաշարժման ապահովում:

Խնդիր 3 Առողջապահական համակարգի հզորությունների ուժեղացում

Գործողություն 1 Կապան համայնքի ենթակառույցների՝ ՆՈՒՀ-երի, մարզադպրոցների համար գույքի, բժշկական սարքավորումների, գործիքների և դեղորայքի ձեռքբերում:

Արդյունք ա/ կբարելավվի ՆՈՒՀ-երի և մարզադպրոցներ հաճախող աշակերտների բուժսպասարկման մակարդակը:

բ/ կմեծանա ՆՈՒՀ-երի և մարզադպրոցների տեխնիկական զինվածությունը և որակյալ բուժսպասարկում ապահովելու հնարավորությունը:

գ/ Կբարձրանա սաների և աշակերտների առողջության պահպանմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներն ապահովող գործընթացների մակարդակը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ծրագրի իրականացումը թույլ կտա ապահովել 2017թ. իրականացված բնապահպանական միջոցառման շարունակականությունը, կնպաստի համայնքի բնակչության համար առողջ կենսամիջավայր ստեղծելուն, հետազոտությունները կօգնեն բնապահպանական խնդիրների բացահայտմանը և դրանց լուծմանն ուղղված միջոցների ճիշտ օգտագործմանը: Այն թույլ կտա նաև ապահովել բնապահպանական հետագա ծրագրերի փոխկապակցվածությունն ու անընդհատությունը: Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը կդրվի կայուն և ամուր հիմքերի վրա:

Համայնքի ղեկավար՝ ***Ա. Հայրապետյան***

Կապան քաղաքի 2018թ. շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման ծրագիրը և ֆինանսավորման աղբյուրները

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Ծրագրի արժեքը, ընդամենը /հազ. դրամ/	Այդ թվում ըստ ֆինանսավորման աղբյուրների՝			Ծանոթություն
			պետական բյուջե /հազ. դրամ/	տեղական բյուջե /հազ. դրամ/	այլ /հազ. դրամ/	
I	**ԲՆապահպանական միջոցառումներ**	**18392,0**	**12722,0**		**5670,0**	
1	Մակերևութային ջրերի և ջրային էկոհամակարգի պահպանություն, այդ թվում՝	5670,0			5670,0	
1.1	Ողջի գետի հունի մասնակի մաքրում	5670,0			5670,0	
2	Մթնոլորտային օդի պահպանություն, այդ թվում՝	12722,0	12722,0			
2.1	Կապանի Ա.Մանուկյան փողոցի մայթերի ծառատնկման, կանաչապատ տարածքների վերականգնման, բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ	12722,0	12722,0			
II	**Առողջապահական միջոցառումներ**	**4614,0**			**4614,0**	
1	Աջակցություն Կապան համայնքում գործող ՆՈՒՀ-երի և մարզադպրոցների բուժկետերին	4614,0			4614,0	
1,1	Բժշկական գործիքների և սարքավորումների ձեռքբերում	2433,0			2433,0	
1,2	Գույքի ձեռքբերում	1466,0			1466,0	
1,3	Դեղորայքի ձեռքբերում	715,0			715,0	
ԸՆԴՀԱՆՈՒՐԸ		**23006,0**	**12722,0**		**10284,0**	

Կապան քաղաքի 2018 թվականի բնապահպանական և առողջապահական ծրագրերում ընդգրկված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները

N	Միջոցառման անվանումը	Գումարը /հազ. դրամ/	Համամասնությունը /%/
1	**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**	*18392,0*	*80*
1.1	Մակերևութային ջրերի և ջրային էկոհամակարգի պահպանություն Ողջի գետի հունի մաքրում	5670,0	25
1.2	Կապան քաղաքի Ա.Մանուկյան փողոցի մայթերին ծառատնկման, կանաչ տարածքների վերականգնման, բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ	12722,0	55
2	**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**	*4614,0*	20
2,1	Աջակցություն Կապան համայնքում գործող ՆՈՒՀ-երի և մարզադպրոցների բուժկետերին	4614,0	20
	ԸՆԴԱՄԵՆԸ	*23006,0*	*100*

Հաստատում եմ
Կապան համայնքի ղեկավար
Ա. Հայրապետյան
«16» 05 2017թ.

Կապան քաղաքի 2018 թվականի բնապահպանական և առողջապահական ծրագրերում ընդգրկված միջոցառումների իրականացման առաջնայնությունները , ֆինանսավորման համամասնությունները և ակնկալվող արդյունքները

N	Միջոցառման անվանումը	Գումարը /հազ. դրամ/	Համամասնությունը %	Ակնկալվող արդյունքները
I	**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**	**18392,0**	**80**	. Կենցաղային թափոններից և գետաբերուկներից կմաքրվի Ողջի գետի ջրային ավազանը: . Կբարելավվի Ողջի գետի ջրային էկոհամակարգը: . Բարենպաստ պայմաններ կստեղծվեն գետի ջրային ֆաունայի, հատկապես ձկների պահպանության համար: . Կբարձրանա 2013թ. իրականացված Ողջի գետի մաքրման աշխատանքների արդյունավետությունը և կապահովվի նշված աշխատանքների շարունակականությունը: . Կնվազի կենցաղային աղբով գետի աղտոտման ռիսկերը: . Ա. Մանուկյան փողոցի ծրագրով նախատեսված հատվածի մայթերի անհարթության պատճառ դարձած ծառերը կհատվեն և կփոխարինվեն նոր տնկիներով, ինչպես նաև կվերականգնվի նշված հատվածների կանաչ տարածքները: Մթնոլորտային օդում կնվազի փոշու և տրանսպորտային արտանետումների խտությունները, հատկապես քաղաքի կենտրոնական մասով անցնող <<Հայաստան-Իրան>> ավտոմայրուղու երկայնքով: . Կնպաստի քաղաքում բարենպաստ միկրոկլիմայի ձևավորմանը: . Կապահովվի բարեկարգված մայթերով հետիոտնի անվտանգ տեղաշարժը: .Համայնքում կնպաստի տուրիզմի զարգացմանը:
1	Մակերևույթային ջրերի և ջրային էկոհամակարգի պահպանություն	5670,0	25	
1,1	Ողջի գետի հունի մաքրում	5670,0	25	
2	Մթնոլորտային օդի պահպանություն	12722,0	55	
2,1 *	Կապանի Ա. Մանուկյան փողոցի մայթերի ծառատնկման, կանաչապատ տարածքների վերականգնման, բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ	12722,0	55	

II	***ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ***	***4614,0***	***20***	.Համայնքի ենթակառույցների՝ ՆՈՒՀ-երը, արտադպրոցական ուսումնական հաստատությունները ձեռք կբերեն բժշկական սարքավորումներ և առաջին օգնության համար պահանջվող դեղորայք: . Կբարելավվի ՆՈՒՀ -եր և մարզադպրոցներ հաճախող սաների, աշակերտների բուժսպասարկան մակարդակը: . Կբարձրանա ՆՈՒՀ-երի և մարզադպրոցների տեխնիկական զինվածությունը և որակյալ բժշկական սպասարկման, առաջին բուժօգնության ապահովման հնարավորությունները: . Կբարձրանա սաների և աշակերտների առողջության պահպանմանն ուղված կանխարգելիչ միջոցառումներն ապահովող գործընթացների մակարդակը:
1	Աջակցություն Կապան համայնքում գործող ՆՈՒՀ-երի և մարզադպրոցների բուժկետերին	4614,0	20	
1,1	Բժշկական գործիքների, սարքավորումների ձեռքբերում	2433,0	11	
1,2*	Գույքի ձեռքբերում	1466,0	6	
1,3	Դեղորայքի ձեռքբերում	715,0	3	
	ԸՆԴԱՄԵՆԸ	***23006,0***	***100,0***	

* Ծանոթություն. Համայնքը նախատեսում է 2018թ. բնապահպանական ծրագրով, պետական բյուջեից հատկացված 12722,0 հազ. դրամ սուբվենցիայի հաշվին իրականացնել Ա. Մանուկյան փողոցի թիվ 3 բազմաբնակարան բնակելի շենքի դիմաց ընկած գետափնյա մայթի հատվածից մինչև Ա. Մանուկյան փողոցի թիվ 5 բազմաբնակարան բնակելի շենքի դիմացի մայթի մոտ 130.0 գծ.մ հատվածի վերանորոգման, ծառերի տնկման աշխատանքներ: Ծրագրի ընդհանուր արժեքը 150,0 մլն դրամ է: Անցած տարներին (2013թ., 2014թ., 2015թ., 2016թ., 2017թ.) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքային բյուջեի միջոցներով իրականացվել է 59,2 մլն. դրամի աշխատանքներ: Միջոցներ է ձեռնարկվում պետական բյուջեից հատկացված գումարների հետ համատեղ դոնոր կազմակերպությունների ներդրումների հաշվին շարունակել և ավարտին հասցնել այդ աշխատանքները:

Ցուցակ

2018 թ-ին Կապան քաղաքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման ծրագրի առողջապահական միջոցառումներ բաժնում թիվ 1.1 , 1.2 , 1.3 ենթակետերով պահանջվող բժշկական գործիքների, գույքի, սարքավորումների և դեղորայքի

Հ/Հ	Անվանումը	Մեկ միավորի արժեքը	Քանակը	Ընդհանուր գումարը (դրամ)
	I. Բժշկական գործիքներ			
1	Լեզվաբռնիչ - բերան լցնիչ	1200	20	24000
2	Անշարժացնող շինաներ /էլաստիկ/	3824	20	76480
3	Սառեցնող ցողացրեր /սպրեյ/	3900	20	78000
4	Տոնոմետր - մանկական	3500	20	70000
5	Բժշկական կշեռք, հասակաչափ	168000	12	2016000
6	Միանվագ օգտագործման	25	516	12900
7	Բժշկական ջերմաչափ /թվային/	2970	21	62370
8	Առաջին օգնության դեղորայքի և պարագաների հավաքածու	2773	20	55460
9	Ռետինե լարան	350	108	37800
	Ընդամենը			***2433010***
	II. Գույք			
1	Բժշկական թախտ	115000	1	115000
2	Ապակե պահարան առաջին օգնության անհրաժեշտ դեղորայքի համար	85000	1	85000
3	Բժշկական շկաֆ գործիքների համար	80000	3	240000
4	Սեղան	55000	6	330000
5	Աթոռ	12000	16	192000
6	Ժամացույց վայրկյանաչափ	6000	14	84000
7	Բժշկական լամպեր	30000	14	420000
	Ընդամենը			***1466000***

	III. Դեղորայք			
1	Հակահիստամինային պատրաստուկ՝			
	1% -անոց դիմեդրոլ /հատ/	25	200	5000
	1% -անոց սուպրաստին /հատ/	350	200	70000
2	Կոֆեին 10% /լիստ/	400	150	60000
3	Կորտիկոստերոիդներ /դեքսամետազոն/ հատ	63	800	50400
4	Ջերմիջեցնող / ցավազրկող՝			
	պարացետամոլ /լիստ/	80	50	4000
	իբուպրոֆեն /լիստ/	100	50	5000
5	Սպազմոլիտիկ (նոշպա) /տուփ/	1980	30	59400
6	Կատվախոտի հանուկ /22հկ/	110	35	3850
7	Կատվախոտի ոգեթուրմ /22հկ/	210	30	6300
8	Ջրածնի պերօքսիդի լուծույթ 3% (100մլ.) / 22հկ/	120	100	12000
9	Սպիրտ բժշկական 70% (100մլ.) /22հկ/	250	100	25000
10	Յոդի ոգեթուրմ 5% /22հկ/	210	200	42000
11	Անուշադրի սպիրտ 10% /22հկ/	120	100	12000
12	Խոնավածուծ սպեղանի (սանտավիկ) /տուփ/	60	500	30000
13	Բինտ ոչ ստերիլ	100	198	19800
14	Բինտ ստերիլ	140	200	28000
15	Բամբակ	160	200	32000
16	Ռետինե սեղմակ /հատ/	250	99	24750
17	Ներարկիչ 2մլ. /հատ/	30	1550	46500
18	Ներարկիչ 3մլ. /հատ/	40	1550	62000
19	Ձելյոնկա /22հկ/	180	200	36000

20	Յոդինոլ	540	150	81000
	Ընդամենը			***715000***

Կապանի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար _____ **Ն. Շահնազարյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 43-Ա
18 ՄԱՅԻՍԻ 2017թ.

«ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻՆ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42)-րդ կետով և հաշվի առնելով Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող ՀՀՏԶ ծրագրին անդամակցելու համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության __8__ կողմ, __0__ դեմ, __0__ ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» ծրագրին Կապան համայնքի անդամակցության վերաբերյալ:
2. Լիազորել համայնքի ղեկավարին՝ միանալ «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությանը և իրականացնել դրա հետ կապված գործառույթներ:

Կողմ (8)՝

ԲԱԲԱՅԱՆ ՆԱՐԵԿ
ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ
ԴԱՎԹՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀԵ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՐԱՄ
ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ մայիսի 18
ք. Կապան